ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Պարույր Սևակի ստեղծագործության համառոտ տարեգրության ուսուցումը

Ուսուցիչ՝ Գալստյան Ռոզա

Գյումրի 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1 Պարույր Սևակի ստեղծագործական կյանքը 5

1.1Պարույր Սևակի կենսագրությունը ..... **Ошибка! Закладка не определена.**

1.2 Պարույր Սևակի ստեղծագործական գործունեությունը 6

Գլուխ 2 Պարույր Սևակի ստեղծագործության համառոտ տարեգրության անդրադարձը գրականության դասերին.....11

2.1«Պարույր Սևակի ստեղծագործության համառոտ տարեգրություն » թեմայի կազմակերպումը.....11

Եզրակացություններ 14

Օգտագործված գրականության ցանկ 15

Ներածություն

Պարույր Սևակը եղել և շարունակում է մնալ հայ գրականության լավագույն ներկայացուցիչներից մեկը: Ինչպես նշել Մարտիրոս Սարյանը՝ «Դու ընդամենը անհատ էիր, բայց ինչպիսի անհատ: Նման էիր լեռնային մի աղբյուրի, որն իր ուժը բնության ընդերքից է առնում ու բնության ուժն է բերում ժողովրդին: Եվ սիրում էինք քեզ, որովհետև չէինք կարող բնությունը չսիրել..»

Թեմայի արդիականությունը: Պարույր Սևակի ստեղծագործությունների օգնությամբ աշակերտների մոտ ձևավորվում և զարգանում մի մեծ արժեհամակարգ, որը ներառում է բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքներ: Զարգանում են այնպիսի վեհ գաղափարներ, ինչպիսիք են սերը ընտանիքի, հայրենիքի նկատմամբ, ազատության գաղափարը:

Սևակն իր ստեղծագործությամբ լուծել է նորարարական խնդիրներ՝ հայ բանաստեղծությամբ ավանդված կառուցվածքները համադրելով ամերիկյան, եվրոպական և ռուսական բանաստեղծության կառուցվածքների հետ: Բանաստեղծական նոր որակի սկիզբն են սիրային պոեմները:

Նաև հայ գեղագիտական մտքի պատմության մեջ է ունեցել մեծ ներդրում, մասնավորապես բանաստեղծական արվեստի տեսական հիմունքների մշակման առումով, ուշագրավ են Սևակի մի շարք հոդվածները:

Սևակի աշխատանքների օգնությամբ աշակերտները կկարողանան կարևորել գեղագիտական արժեքները, գնահատել գեղեցիկը, բարին և ճշմարիտը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել Պարույր Սևակի ստեղծագործության համառոտ տարեգրությունը: Նպատակի ուսումնասիրությունն ուղղված է սովորել սովորելու, ինքնաճանաչողական և սոցիալական, ժողովրդավարական և քաղաքացիական, մշակութային կարողունակություններին:

Խնդիրներն են՝ հասկանալ ի՞նչ կարևոր նշանակություն ունի Պարույր Սևակի ստեղծագործության համառոտ տարեգրությունը աշակերտների համար և ո՞ր կարողունակությունների զարգացմանն է ուղղված:

Աշխատանքի ուսումնասիրության ընթացքում կիրառվել են հետևյալ **մեթոդները՝** ընդհանուր վերլուծություն, մեջբերումներ, մտագրոհ, ԳՈՒՍ:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, առաջարկություններից և գրականության ցանկից:

Գլուխ 1-ին
Պարույր Սևակի ստեղծագործական կյանքը

Պարույր Սևակը ծնվել է 1924 թ-ի հունվարի 24-ին Արարատի մարզի Չանախչի (այժմ՝ Զանգակատուն) գյուղում[1]:

Լինելով ծնողների միանուագար որդին՝ Պարույրը մանկությունից մշտապես զգացել է նրանց հոգատարությունն ու փայփայանքը: Պարույրի մեջ պատվաստել էին նվիրվածություն հարազատների հանդեպ, արյունակցական կապի սրբազան զգացում, անկեղծ ու ջերմ սեր շրջապատի մարդկանց, հատկապես՝ մոր հանդեպ: Ահա, թե ինչ է գրում բանաստեղծը գրառումների մի ծոցատետրում իր մոր՝ Ազիի (ինչպես կանչում էր նրան) մասին. «Իմ մայրը մի կին էր, որի համար դժբախտության հասկացողությունը անհասկանալի մնաց ամբողջ կյանքում: Ամբողջ կյանքում նա իրեն դժբախտ է համարել, այդքանով էլ, իսկապես, դժբախտությունը՝ ահավոր ճշտությամբ ապրելուց հեռու մնալով: Նրա համար դժբախտություն էր՝ խոտը ուշ դեզելը, թեյի գդալների պակասը, աման ջարդվելը, պարանի կորչելը: Բանաստեղծական հոգի էր նա, աշխարհը ողբերգականորեն վերապրող, անհանգիստ, անհագ հոգի, որքան, իհարկե, զորում էր նրա գեղջկական՝ պարզ, ոչնչով չաղարտված արտաքին էությունը: Ես նրանից ժառանգել եմ չափազանց շատ, անքան շատ, որ մեծագույն մասով փոխարկվել է ուղիղ հակադրության»: Պարույր Սևակը մեծություն էր անգամ մանուկ հասակում:

1939 թվականից Պարույր Ղազարյանը դարձել է Երևանի պետական համալսարանի բանասիրական բաժանմունքի հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանող (մինչև 1945): Ավարտել է Մոսկվայի Մաքսիմ Գորկու անվան գրականության ինստիտուտը (1955), որտեղ և դասախոսել է (1955-1959): 1946 թվականին ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ հայ հին գրականություն մասնագիտությամբ: Նույն այս տարիներից էլ սկսվել է նրա աշխատանքային գործունեությունը: 1945-1946 թվականներին որպես գյուղական երիտասարդության բաժնի վարիչ աշխատել է «Ավանգարդ» թերթում, 1946-1947

[1] https://hy.wikipedia.org/wiki/%D5%8A%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D6%80_%D5%8D%D6%87%D5%A1%D5%AF 02.09.23

թվականներին որպես մամուլի բաժնի ավագ ռեֆերենտ՝ Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և մշակութային կապի հայկական ընկերությունում: 1949-1951 թվականներին վարել է «Գրական թերթի» պոեզիայի բաժինը[3]: 1963-1971 թվականներին եղել է ավագ գիտաշխատող ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, 1966–1971 թվականներին՝ Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար:

1.2 Պարույր Սևակի ստեղծագործական գործունեությունը

Իսկ այժմ ավելի մանրամասն անդրադառնանք Պ. Սևակի ստեղծագործական գործունեությանը:

Առաջին բանաստեղծությունը թղթին է հանձնել Ի. Տուրգենևի «Առաջին սեր» պատմվածքի հերոսուհու՝ Զինաիդայի կերպարի ներշնչանքով: Այս տարիներին էլ նա երազում է գրող դառնալու մասին, և դպրոցում Պարույր Արեգունի ստորագրությամբ հրապարակում է իր առաջին բանաստեղծությունները: Սևակի բանաստեղծությունները տպագրվել են 1942 թվականից:

1941-1942թթ-ին գրում է «Ռեքվիեմ», «Սոնետներ», «Աղոթքներ» շարքերը, «Լուսին» պոեմը[2]: «Սովետական գրականություն» ամսագրի 1942-ի թիվ 7- ում լույս են տեսնում նրա «Անխորագիր», իսկ նույն թվականի 8- րդ համարում' «Փնտրումներ», «Զղջում», «Պատերազմի դաշտում զոհվածներին» բանաստեղծությունները: Ամսագրի խմբագիրը Ռ. Զարյանն էր, որը և Պարույր Ղազարյանին մկրտում է Պարույր Սևակ գրական անունով: Սկիզբն անսովոր էր ու խոստումնափց: Խոստումնալից-ին ուշադրություն չդարձրին, բայց անսովոր՝ը չվրիպեց գրական պահպանողականների ուշադրությունից, և 18-ամյա բանաստեղծը դարձավ վտանգավոր հարձակումների թիրախ, մեղադրվեց զանազան իզմերի մեջ: Այդուհետև նա այլևս չտպագրվեց մինչ 1948 թ: Նա դատապարտվեց վեց տարվա հարկադիր լռության, իսկ ամսագրի խմբագիրը, նաև Պարույր Սևակի բանաստեղծությունների տպագրության համար, հեռացվեց աշխատանքից:

---

[2] Դ. Գասպարյան, Պարույր Սևակի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2001թ

Ամբողջ 1940-ական թվականները Սևակի համար լինում են հասունացման, հոգևոր ամրացման, առաջին հաջողությունների ու առաջին հիասթափությունների տարիներ: Ցավով է բանաստեղծը վերհիշում ետպատերազմյան ժամանակները. «Անառողջ էր կյանքն ու իրականությունը: Եվ դա առավել սուր զգացվում էր արվեստի աշխարհում... Բոլոր թվերից երջանկագույնը դարձել էր երեքը, որովհետև դա էր խորհրդանիշը Նորին Մեծություն Միջակության: Լավագույն անտառի նմուշը... գազոնն էր: Արվեստագետի ստեղծագործությունը նմանվում էր թվաբանական խնդիր լուծող աշակերտի գործի, խնդրագրքի վերջում տրված էր խնդրի պատասխանը, արվեստագետի գործն էր ամեն ինչ անել, որպեսզի ստացվի նախապես արված պատասխանը: ...Մինչդեռ բանաստեղծության աշխարհում կարող է տեղ ունենալ ամեն արարած, բացի... թութակից: ...Սեփական կարծիք ունենալը հավասարվել էր հերետիկոսության: Չէր կարելի ունենալ նույնիսկ սեփական բառապաշար, հոմանիշների խրձից ընդունելի էր միայն մեկը' այն, որ մաշվում էր լրագրերի մեջ. հարյուրավոր բառերի և դարձվածքների վրա դրված էր տարոս այդ թվում նաև «ես»-ի' իր բոլոր հոլովաձևերով: ...Սկսած 1942-ից, այսինքն' իմ գիտակցական կյանքի սեմից, ես կյանքին ու աշխարհին նայում էի այնպես, ինչը հետագայում (20-րդ համագումարի որոշումներով) դարձավ համընդհանուր կանոն մեր կյանքի ու երկրի համար: Շնորհիվ այս բանի էլ, իմ շատ գրչակիցների համեմատությամբ, ես կարողացա խուսափել շատ մեղքերից: ...Այդ տարիներին ես հասկացա, որ մի բան մտածել և այլ բան ասելը անբարոյականության վատթարագույն տեսակն է» («Անցյալը ներկայացած»):

Իսկ սրանք նրա մտավոր թռիչքի տարիներն էին: Նա գրեց շատ, բայց տպագրեց քիչ: Երջանիկ բարեպատեհություն էր առաջին գրքի հրատարակությունը: «Անմահները հրամայում են» վերնագրով այն լույս տեսավ 1948թ-ին : Գիրքը արդար խղճի, հասուն ձիրքի և անդավաճան գրական սկզբունքների արտահայտություն էր: Առաջին փորձությանը Սևակը դիմացավ և դրանից դուրս եկավ հաղթանակով:

Այնուհետև լույս են տեսել «Անհաշտ մտերմություն» (1953) պոեմը և «Սիրո ճանապարհը» (1954) բանաստեղծությունների ժողովածուները: 1957 թվականին լույս է տեսել Պարույր Սևակի «Նորից քեզ հետ», որում ընդգրկված ստեղծագործությունները գրվել են 1946-1956 թվականներին:

Բանաստեղծական նոր որակի սկիզբն են սիրային պոեմները («Ուշացած իմ սեր», «Նահանջ երգով», «Երգ երգոց») և «Անլռելի զանգակատուն» (1959, վերամշակված հրատարակություն 1966, ՀՍՍՀ պետական մրցանակ՝ 1957) քնարական-փիլիսոփայական պոեմը[3]:

Ինչպես նշում է Դ. Գասպարյանը. «Սևակի սիրո ապրումը զգում և վերարտադրում է ոչ թե մեկ-երկու տարածված վիճակների մեջ (սիրո արբեցում, մերժված, անպատասխան, անհասանելի սիրուց առաջացած տառապանք), այլև՝ բացահայտում տվյալ զգացմունքի բոլոր հատկանշական կողմերը: Սերը նրա քնարական հերոսի համար ոչ միայն ոգեղենացված մի պահ է, այլև՝ հոգևերո կենսագրություն: Այդ իսկ պատճառով այդ զգացողության վերապրման գերիշխող վիճակների կողքին իրենց տեղն ունեն նաև բավարարված սերը, սիրո խաղը, սիրո ձանձրույթը, անսեր սերը, օտար սերը»:

«Անլռելի զանգակատուն»-ը պատկերում է Կոմիտասի ճակատագիրը՝ ծննդյան օրից մինչև Մեծ եղեռնի տպավորություններից խելագարվելը, ապա և մահը՝ «վերադարձը հայրենիք»՝ 1935 թվականին: Այդ ամենը պոեմում ներկայացվել է հայ ժողովրդի քաղաքական ու սոցիալական կյանքի ընդարձակ ֆոնի վրա, ազգագրական ու բանահյուսական նյութի հարուստ օգտագործումով: Պոեմը ծավալվում է սիմֆոնիկ ստեղծագործության սկզբունքով, մեծ իրադարձությունները մարմնավորող «համազանգ»-երի և ավելի փոքր անցքերը մարմնավորող «ղողանջ»-ների միահյուսումով: Բարձր պաթոսով է հագեցած պոեմի վերջաբանը, որը խորհրդանշում է հայություն-հայ երգ-Կոմիտաս եռամիասնության հարատևության գաղափարը: Պոեմն ամբողջությամբ, կառուցվածքի և բանաստեղծական արտահայտչաձևերի ինքնատիպությամբ երևույթ է բազմադարյան հայ պոեմի պատմության մեջ:

Այնուհետև լույս է տեսնում նաև նրա երրորդ ժողովածուն՝ «Սիրո ճանապարհ»[4]: Գրքում զետեղված բանաստեղծությունները գրել էր 1946-1953 թթ և դրանից դժգոհ էր. «Երբ լույս էր տեսնում իմ երրորդ ժողովածուն, ես արդեն լքել էի ինքս ինձ' խճճվելով մի այնպիսի ճգնաժամի մեջ, որ առավել անտանելի է, քան տնտեսական կոչվածը,

[3] https://hy.wikipedia.org/wiki/%D5%8A%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D6%80_%D5%8D%D6%87%D5%A1%D5%AF 02.0.23

[4] Ա. Արիստակեսյան, Պարույր Սևակ, Երևան, 1984թ

որովհետև կոչվում է հոգեկան» («Անցյալը ներկայացած»): Այսուհանդերձ, գիրքն ուներ բավականին ուշագրավ էջեր:

Հոգեկան ճգնաժամն այս դեպքում վերաբերում է ոչ այնքան ստեղծագործությանը, որքան անձնական կյանքին[5]: Խզվել էին նրա հոգեկան կապերը առաջին կնոջից, որից բաժանվում է 1954թ- ին և ամուսնանում երկրորդ կնոջ հետ, որին ճանաչել էր դեռևս 1952 թվականից: Անհավասարակշիռ, ջղային կացությունն այս տարիներին նրան հանել էր հունից:

Դրան էլ ավելանում է հայրենիքի մշտատև, մշտառկա ու մորմոքուն կարոտը: Սևակի պես բանաստեղծի համար հեշտ չէր այդքան երկար ժամանակ կտրված մնալ հարազատ միջավայրից, կենդանի լեզվական մթնոլորտից, Արարատի սրբազան կերպարին ամեն օր նայելու երջանկությունից: Առաջին օրերի հոգեմաշ կարոտը շարունակվում է մնացած բոլոր օրերի մեջ ծնունդ տալով բանաստեղծությունների: Դրանց մեջ է նաև «Անքնություն»-ը(1956).

...Քունքս չի տանում,
Դու էլ մի քնիր,
Հետս էլ կրկընիր
Թե ի՞նչ եմ անում,
Ես ի՞նչ եմ անում
Ոչ Հայաստանում...

Եվ, ի վերջո, պատահական չէր, որ «Անլռելի զանգակատուն» պոեմի պես խորապես հայրենասիրական երկը գրվեց Մոսկվայում: Կարոտը խեղդեց նրան, շիթ առ շիթ կուտակվեց նրա հոգում և դուրս հորդեց որպես հրաբուխ:

1957-ին լույս տեսավ Սևակի գրական մեծ շրջադարձն ազդարարող «Նորից քեզ հետ» ժողովածուն, որը գրվել է 1946-1956 թթ-ին[6]: Գրքում զետեղված գործերը թեև գրվել են տարբեր տարիների, բայց կատարվել էր ճիշտ ընտրություն: Գիրքը լույս տեսավ երկրում տիրող քաղաքական-մշակութային վերելքի տարիներին, երբ հաղթահարվել էր անհատի պաշտամունքը, երբ տեղի էր ունեցել 20-րդ համագումարը:

---

[5] Դ. Գասպարյան, Պարույր Սևակի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2001թ
[6] Ա. Արիստակեսյան, Պարույր Սևակ, Երևան, 1984թ

Ինչո՞ւ «Նորից քեզ հետ», ահա հեղինակի բացատրությունը. «Առերևույթ կարելի է կարծել, որ խորագիրը վերաբերում է քնարական հերոսուհուն: Չեմ ուզում ժխտած լինել, բայց կուզեի ավելացնել, թե դա առավել վերաբերում է իմ էությանը, որ փախստական էր դարձել և իմ ձայնին, որ փոխել էի ջանացել» («Անցյալը ներկայացած»):

Գլուխ 2-րդ

Պարույր Սևակի ստեղծագործության համառոտ տարեգրության անդրադարձը գրականության դասերին

2.1 «Պարույր Սևակի ստեղծագործության համառոտ տարեգրություն» թեմայի կազմակերպումը

Նշված թեմայի ուսումնասիրման ընթացքում կիրառում եմ տարբեր մեթոդներ և եղանակներ: Անդրադառնանք մի քանիսին:

Առաջին մեթոդը դա մեջբերումներն է՝ Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը[7]: Օրինակ Պարույր Սևակի «Վարք Մեծաց» բանաստեղծության մասելիս խոսելիս նշում եմ մի հատված՝

Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած.
Ծնվում են նրանք ճի՛շտ ժամանակին:
Եվ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց:
Անտոհմ չեն նրանք կամ անհայրենիք.
Հասարակ հորից ու մորից ծնված՝
Սերում են նրանք և ա՛յն վայրենուց,
Որ էլ չէ՛ր կարող ապրել քարայրում:

Հաջորդ մեթոդը դա մտագրոհն է: Մտագրոհի միջոցով կարողանում եմ դասարանից հավաքել մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ, ինքս հաճախ եմ կիրառում այս մեթոդը: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը, աշակերտները առանց երկար մտածելու պատասխանում են հարցին, որը հնարավորություն կտա հասկանալ, թե աշակերտները թեմայի վերաբերյալ ինչ պատկերացում ունեն: Աշակերտների առջև կոնկրետ խնդիր է դրվում, նրանցից յուրաքանչյուն արտահայտում է սեփական տեսակետները՝ առանց որևէ

[7] Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020թ

մեկնաբանություն տալու փորձի: Գրատախտակին գրում եմ Պարույր Սևակի ստեղծագործություններ արտահայտությունը, իսկ աշակերտները շարունակում են: Արդյունքները ներկայացված են հաջորդիվ՝



Նշված թեմայի ուսումնասիրության ընթացքում հաճախ կիրառում եմ ԳՈՒՍ մեթոդը: Դասասկզբում գծում եմ Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում եմ՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Այնուհետև դիմում եմ աշակերտներին հետևյալ հարցով՝ ի՞նչ գիտեք այս թեմայի,

հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում եմ՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում եմ ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը[8]՝



[8] Ս. Խաչատրյան, Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020թ

Եզրակացություններ

Այսպիսով, «Պարույր Սևակի ստեղծագործության համառոտ տարեգրություն» թեմայի ուսումնասիրության արդյունքում կարող ենք ասել, որ Պարույր Սևակը թողել է հարուստ և արժեքավոր ժառանգություն հետագա սերունդների համար, որը երբևէ չի կորցնում իր արդիականությունը:

Նշված թեմայի ուսումնասիրությունը կնպաստի աշակերտների մոտ ձևավորել սերը ընտանիքի, հայրենիքի նկատմամբ, ազատության գաղափարը:

Այսպիսով, առաջարկում ենք Պարույր Սևակի ստեղծագործություններին հատուկ ուշադրություն դարձնել և դասապրոցեսի ընթացքում կիրառել տարբեր մեթոդներ դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Արիստակեսյան Ա., Պարույր Սևակ, Երևան, 1984թ.:
2. Գասպարյան Դ., Պարույր Սևակի կյանքը և ստեղծագործությունը, Երևան, 2001թ.:
3. Գասպարյան Դ., Գրականություն, 7-րդ դասարան, Երևան, 2011թ.:
4. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020թ.:
5. https://hy.wikipedia.org/wiki/%D5%8A%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D6%80_%D5%8D%D6%87%D5%A1%D5%AF 02.09.23: